

Յակոբ Վարդիվառեան

Լուրեր նիւ Եորքէն

15-ԱՄԵԱԿ «ՇՈՒՇԻ» ՊԱՐԱԽՈՒՄԲԻ

Արդէն տասնըճինգ տարեկան է ամերիկահայութեան կողմէ սիրուած «Շուշի» պարախումբը:

«Շուշի»ն ի՞նչ պիտի խորհրդանշէր պարախումբի կազմութեան առաջին 6-7 հիմնադիր պարուհիներէն մէկուն՝ Անի Սեդրակեան-Մանուկեանին համար արդեօք: Ու իրապէս ալ ան իր խօսքին մէջ ներկայացուց պարախումբին ծնունդն ու անոր յաջորդող տարիներու ձեռքբերումները: Թենըֆլայի Ս. Թովմաս եկեղեցւոյ կարգ մը ծխականներու աղջիկ զաւակներով ու Սեդա Փասքալեան-Գանթարճեանի հետեւողական եւ յամառ աշխատանքին արտասիքն էր այն երազը, որ ունեցան ափ մը այս աղջիկները Ղարաբաղեան մարտերու ամիսներուն երբ Շուշիի ազատագրման օրերու խանդավառութեամբ ալ պարախումբը մկրտեցին այդ անունով: Կու տար պայքարի մը ամբողջական պատկերը եւ բնականաբար այդ կը մնար մնայուն ոգի որպէս հիմնադիրներուն՝ Սիրանուշին, Նիրվային, Նատինին, Թամարին, Թալինին, Դալարին ու Անիին ներաշխարհներէն ներս:

Պարախումբին առաջին ելոյթը տեղի կ'ունենար եղբայրական քաղաքի՝ Ֆիլատելֆիոյ մէջ Դեկտեմբեր 17, 1993 ու այդ սկիզբը կ'ըլլար բարի տասնըճինգ տարիներու երթը «Շուշի»ականներուն:

Մայիս 30ին, Ուրբաթ երեկոյեան առաջնորդանիստ Ս. Վարդան Մայր Տաճարի Գավուքճեան սրահը լեցուն էր ծանօթ ազգային դէմքերով ու պարախումբի անդամներու ծնողներով: Հանդիսութիւնը կը վայելէր հովանաւորութիւնը առաջնորդ խօսակար. Պարսամեանի: «Շուշի»ն պաշտօնապէս կը հովանաւորուի Ամերիկայի Հայոց Առաջնորդարանի կողմէ:

Սերտա Պըլըքտանեանի բացման խօսքէն ու Մարտիրոս քնն. Շէվեանի աղօթքէն ետք պարախումբի մենապարուհի Ռիթա Գահվէճեան հայերէն լեզուով ներկայացուց օրուան հանդիսութեան երեւոյթը վեր հանելով խումբի գեղարուեստական ղեկավարին՝ տիկին Սեդային արժանիքները ըսելով. «անոր ամբողջական գուրգուրանքին արժանի դարձաւ պարախումբը իր գոյութեան մէկուկէս տասնամեակին: Անկարելի պիտի ըլլար առանց Սեդային շարունակել սկսուած գործը: Անոր լայն համբերութիւնն ու գոհողութեան ոգին դարձաւ վարակիչ, օրինակ հանիսանալով իւրաքանչիւրիս համար:»

Օրուան գլխաւոր բանախօսն էր Նիւ Ճըրզիի Հայկական Ռատիօժամի հիմնադիր-անօրէն Վարդան Ապտօ: Ան արժանաւորապէս ներկայացուց պարախումբին ունեցած յաջողութեանց շարքը եւ անոր տեղը Մեծագոյն Նիւ Եորքի հայկական համայնքէն ներս: Յիշեց պարախումբի պատասխանատուին՝ Սեդային եղբայրը՝ Սարգիս Փասքալեան (որ ներկայ էր հանդիսութեան), որուն շնորհիւ մօտ 35 տարիներ առաջ ժողովրդականանալ սկսած էր հայկական պարարուեստը Հիւսիսային Ամերիկայի տարածքին: Յիշենք նաեւ որ յիշեալ ռատիօժամին 30ամեակն է այս տարի:

Կարկանդակի հատումէն ետք, հուսկ խօսք առաւ առաջնորդ սրբազան հայրը: Ան իր հայրական օրհնութիւնները բաժնեց իւրաքանչիւր վարչական անդամուհիի թէ պարուհիի, քաջալերելով անոնց ազգանուէր գործը հայ մշակոյթի պահպանման սրբազան գործին համար:

Գեղարուեստական բաժնի մէջ ելոյթ ունեցաւ 110 հոգիներէ բաղկացած պարախումբը հրամցնելով ներկաներուն ճոխ յայտագիր մը, ժողովրդական պարերու գեղեցիկ համադրումով մը, որ պիտի յիշեցնէր այս մեծ ոստանի «պրոտուէյ»ի շօերուն մ'թնոլորտը ... վերջապէս Երկրորդ Պողոտայի վրայ գտնուող մեր սրահը այնքան ալ հեռու չէ Ամերիկայի այդ հանրայայտ պողոտայէն, ուրկէ անցան այս երկրին քանի-քանի արուեստագէտները:

Հիւրաբար ներկայ էր Լոս Անճելըսէն երգչուհի Յասմիկ Մայլեանը, որ հրամցուց քանի մը երգ:

Հայկական պարեղանակներով խանդավառութիւն ստեղծեց երգիչ Վարուժան Վարդանեան Մելիք Օհանեանի գլխաւորած երաժշտախումբին մասնակցութեամբ:

Մասնաւոր շնորհակալութեան արժանի են ամպայմանօրէն պարախումբին անձնուրաց վարչական տիկիները:

Խումբը շուտով կը մեկնի հայրենիք ունենալու իր հիւրախաղերը Երեւանի Պետական Ակադեմական Օփերայի սրահին մէջ, Յուլիս Յին եւ ապա՝ Նուպարաչէնի զօրանոցի մէջ հայ գինուորներուն նուիրուած յայտագիրով:

Պռաւօ Սեդա. այս անգամ եւս արժեցուցիր տաղանդդ: